

# ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԱՆԳԼԵՐԵՆԻ ԱԾԱՆՑԱԿԱՆ ԲԱՂԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԵՐՏ ՆՇԱՆԱՍԵՐՈՒՄԸ

Արինե Դանիելյան

Վանաձորի Հովհ. Թումանյանի անվան պետական համալսարան

Ածանցական բաղադրությունների ինքնակերտ նշանասերում ասելով՝ նկատի ունենք դրանց այնպիսի կազմությունը, երբ տվյալ խոսքի մասի սերող հիմքը նույն խոսքի մասն է: Պարզել ենք հասկացական դասերի և ազդանշանների հարաբերակցությունը՝ դրանք տեղայնացնելով հայ լեզվաբանության մեջ բացահայտված լեզվական գոյամակարդակներում:

**Բանալի բառեր.** ածանցական բաղադրություն, ինքնակերտ նշանասերում, առարկայական ազդանշան, լեզվական կաղապար, համակարգ, շարակարգ, գծակարգ, առարկայական ազդանշան, հատկանշային ազդանշան, մակադրահատկանշանային ազդանշան, ընթացային ազդանշան:

## Ներածություն

Ածանցական բաղադրությունների ինքնակերտ (Ադայան 1967:380-381) նշանասերում ասելով՝ նկատի ունենք դրանց այնպիսի կազմությունը, երբ տվյալ խոսքի մասի սերող հիմքը նույն խոսքի մասն է՝ ի հակադրություն այլակերտ նշանասերման, որի դեպքում նույնական չեն սերող հիմքը և բաղադրող հիմքի կամ ածանցման միջոցով կազմված խոսքի մասը: Այսպես՝ *kingdom, commonable, incorporate* բաղադրյալ բառերում ունենք ինքնակերտ նշանասերում, որովհետև դրանցից առաջինը գոյական է, գոյական է նաև նրա սերող հիմքը՝ *king-*, երկրորդն ածական է, ածական է նաև նրա սերող հիմքը՝ *common-*, և երրորդը բայ է, բայ է նաև սերող հիմքը՝ *-corporate*: Իսկ հետևյալ օրինակներում՝ *drunkard, comfortable, darken*, առաջինը գոյական է, որի սերող հիմքն ածական է՝ *drunk-*, երկրորդն ածական է, որի սերող հիմքը գոյական է՝ *comfort-*, երրորդը բայ է, որի սերող հիմքն ածական է՝ *dark-*, ուստի վերջին երեք օրինակներում ունենք այլակերտ նշանասերում: Ստորև կներկայացնենք ժամանակակից անգլերենի միայն ինքնակերտ նշանասերման պատկերը: Նշենք, որ նշանասերման մեջ ածանցներն ընդունված է անվանել ազդանշաններ, ըստ որոնց՝ գոյականական նշանասերման դեպքում ունենում ենք առարկայական, ածականականի դեպքում՝ հատկանշանային, բայականի դեպքում՝ ընթացային, մակբայականի դեպքում՝ մակադրահատկանշանային ազդանշաններ: Այն

դեպքում, երբ նույն ածանցով տարբեր խոսքի մասեր են կերտվում, տվյալ ածանցի մոտ դնում ենք թվային ցուցիչ, օրինակ՝ *-ette1*, *-ette2*:

**Առարկայական ազդանշաններ: Գոյականական ինքնակերտ նշանասերում:** Ժամանակակից անգլերենի առարկայական ազդանշաններով գոյականական ինքնակերտ նշանասերման՝ գոյական հիմքով վերջածանցական լեզվական կաղապարն է  $N + Suf = N$ , որի շարակարգային մասնակաղապարումը գործառու է հետևյալ վերջածանցների միջոցով՝ *-asy*, *-ade*, *-age*, *-an*, *-ana*, *-ance*, *-ant*, *-ase*, *-aster*, *-ate*, *-cide*, *-dom*, *-drome*, *-ee*, *-een*, *-eme*, *-en*, *-enne*, *-er*, *-ese*, *-ess*, *-ette1*, *-ette2*, *-ful*, *-hood*, *-i*, *ice*, *-ics*, *-ide*, *-ifer*, *-ina*, *-ine*, *-is*, *-ism*, *-ist*, *-ity*, *-kin*, *-let*, *-ling*, *-ment*, *-ock*, *oid*, *-(e)ry*, *-oon*, *-ship*, *-ster*, *-ule*, *-um*, *-ure*, *-us*, *-y*: Լեզվական կաղապարի հոգեբանական և նյութական անցումները պատկերված են 1-ին աղյուսակում (Աթայան 1988):

Աղյուսակ 1

***N + Suf = N լեզվական կաղապարը և նրա հոգեբանական անցումներն ու խոսքային իրացումները***

Համակարգային (լեզվական) լիակաղապար: Նշանակյալ	Շարակարգային (լեզվախոսքային) մասնակաղապարում: Նշանակում	Գծակարգային (խոսքային) իրացում: Նշանակիչ
1. $N + Suf = N$	$N + asy = N$	captaincy
2. $N + Suf = N$	$N + ade = N$	lemonade
3. $N + Suf = N$	$N + age = N$	pupilage
4. $N + Suf = N$	$N + an = N$	physician
5. $N + Suf = N$	$N + ana = N$	Shakesperiana
6. $N + Suf = N$	$N + ance = N$	capacitance
7. $N + Suf = N$	$N + ant = N$	libellant
8. $N + Suf = N$	$N + ase = N$	amylase
9. $N + Suf = N$	$N + aster = N$	poetaster
10. $N + Suf = N$	$N + ate = N$	doctorate
11. $N + Suf = N$	$N + cide = N$	fratricide
12. $N + Suf = N$	$N + dom = N$	kingdom
13. $N + Suf = N$	$N + drome = N$	airdrome
14. $N + Suf = N$	$N + ee = N$	bootee
15. $N + Suf = N$	$N + een = N$	girleen
16. $N + Suf = N$	$N + eme = N$	morpheme
17. $N + Suf = N$	$N + en = N$	quartern
18. $N + Suf = N$	$N + enne = N$	comedienne

19. N + Suf = N	N + er = N	gardener
20. N + Suf = N	N + ese = N	telegraphese
21. N + Suf = N	N + ess = N	poetess
22. N + Suf = N	N + ette1 = N	farmerette
23. N + Suf = N	N + ette2 = N	cigarette
24. N + Suf = N	N + ful = N	basketful
25. N + Suf = N	N + hood = N	childhood
26. N + Suf = N	N + i = N	Pakistani
27. N + Suf = N	N + ice = N	cowardice
28. N + Suf = N	N + ics = N	mathematics
29. N + Suf = N	N + ide = N	ozonide
30. N + Suf = N	N + ifer = N	conifer
31. N + Suf = N	N + ina = N	tzarina
32. N + Suf = N	N + ine = N	cobaltine
33. N + Suf = N	N + is = N	appendicitis
34. N + Suf = N	N + ism = N	symbolism
35. N + Suf = N	N + ist = N	careerist
36. N + Suf = N	N + ity = N	rascality
37. N + Suf = N	N + kin = N	lambkin
38. N + Suf = N	N + let = N	authorlet
39. N + Suf = N	N + ling = N	manling
40. N + Suf = N	N + ment = N	basement
41. N + Suf = N	N + ock = N	hillock
42. N + Suf = N	N + oid = N	meteoroid
43. N + Suf = N	N + oon = N	cartoon
44. N + Suf = N	N + (e)ry = N	forestry, jewellery
45. N + Suf = N	N + ship = N	friendship
46. N + Suf = N	N + ster = N	roadster
47. N + Suf = N	N + ule = N	spherule
48. N + Suf = N	N + um = N	ligamentum
49. N + Suf = N	N + ure = N	prefecture
50. N + Suf = N	N + us = N	poiypus
51. N + Suf = N	N + y = N	daddy

**Հատկանշային ազդանշաններ:** Ածականական ինքնակերտ նշանասերում: Ածականական ինքնակերտ նշանասերման սահմանափակ թվով կաղապար է բերում Օ. Մեշկովը (Мешков 1976:84), որոնք այստեղ ևս ներկայաց-  
60

նում ենք լեզվախոսքային հարաբերությունների կտրվածքով:  $A + \text{Suf} = A$  լեզվական կաղապարի հոգեբանական (լեզվախոսքային/շարակարգային) մասնակաղապարումն իրականացվում է հետևյալ վերջածանցների միջոցով՝ *-able, -ful, -ish, -ly, -some, -y*: Հոգեբանական (շարակարգային) շերտի միջնորդությամբ լեզվից խոսք կամ համակարգից գծակարգ անցումը կաղապարային աստիճանական իրացման հետևյալ դրսևորումներն է ունենում.  $A + \text{Suf} = A = A + \text{able} = A - \text{commonable}$ ,  $A + \text{Suf} = A = A + \text{fold} = A - \text{manifold}$ ,  $A + \text{Suf} = A = A + \text{ful} = A - \text{darkful}$ ,  $A + \text{Suf} = A = A + \text{ish} = A - \text{coldish}$ ,  $A + \text{Suf} = A = A + \text{ly} = A - \text{sickly}$ ,  $A + \text{Suf} = A = A + \text{some} = A - \text{darksome}$ ,  $A + \text{Suf} = A = A + \text{y} = A - \text{greeny}$ :

**Ընթացային և մակադրահատկանշային ազդանշաններ: Բայական և մակբայական ինքնակերտ նշանասերումներ:** Վերջածանցմամբ ինքնակերտության տեսակետից ժամանակակից անգլերենը բայական նշանասերման՝ մեկ և մակբայական նշանասերման երկու կաղապար ունի: Ներկայացնենք, նախ, ընդհանրական կաղապարները՝  $V + \text{Suf} = V$ ,  $D + \text{Suf} = D$ : Նշված կաղապարներից բայական նշանասերման մասնակաղապարումը կատարվում է *-ify* վերջածանցի, իսկ մակբայական նշանասերումը՝ *-ward* և *-wards* վերջածանցների միջոցով: Բերենք, արդ, դրանց՝ լեզվից հոգեկան շերտի միջնորդությամբ իրականացվող խոսքային իրացումները՝ որպես բառային միավորներ.

$V + \text{Suf} = V = V + \text{ify} = V - \text{argufy}$ .

1)  $D + \text{Suf} = D = D + \text{ward} = D - \text{downward}$ , 2)  $D + \text{Suf} = D = D + \text{wards} = D - \text{onwards}$ :

**Նախածանցում (ինքնակերտ նշանասերման նախածանցական կաղապարները):** Ժամանակակից անգլերենի նախածանցական ինքնակերտ կաղապարների մեջ գոյություն չունի մակբայական նշանասերում: Նախածանցմամբ ինքնակերտ նշանասերման կաղապարներն իրացված են գոյականակերտմամբ, ածականակերտմամբ և բայակերտմամբ: Այս երեքը մոտավորապես նույն քանակությամբ մասնակաղապարումներ ունեն՝ 28 գոյականակերտ, 25 ածականակերտ և 23 բայակերտ:

**Առարկայական ազդանշաններ: Գոյականական ինքնակերտ նշանասերում:** Գոյականական ինքնակերտ նշանասերմանն օժանդակում են հետևյալ նախածանցները՝ *a-, anti-, arch-, co-, contra-, counter-, demi-, dis-, dys-, epi-, ex-, fore-, hemi-, hyper-, hypo-, in1-, mis-, non-, out-, over-, post-, pre-, pro-, sub-, super-, sur-, un1-, under-*: Սրանք  $\text{Pref} + N = N$  լեզվական կաղապարից հոգեկան շերտի անցման առկայացուցիչներն են, որոնցով սերվում են գոյականական նշաններ: Լեզվական կաղապարից հոգեբանական շերտի միջնորդությամբ գոյականական նշանասերման ազդարարման պատկերը բերված է 2-րդ աղյուսակում:

Աղյուսակ 2

***Pref + N = N լեզվական կաղապարը և նրա հոգեբանական անցումներն ու խոսքային իրացումները***

Համակարգային (լեզվական) լիակաղապար: Նշանակյալ	Շարակարգային (լեզվախոսքային) մասնակաղապարում: Նշանակում	Գծակարգային (խոսքային) իրացում: Նշանակիչ
1. Pref + N = N	a + N = N	acosmizm
2. Pref + N = N	anti + N = N	antihero
3. Pref + N = N	arch + N = N	arch-father
4. Pref + N = N	co + N = N	cooperator
5. Pref + N = N	contra + N = N	contra-rotation
6. Pref + N = N	counter + N = N	counter-attraction
7. Pref + N = N	demi + N = N	demi-circle
8. Pref + N = N	dis + N = N	disadvantage
9. Pref + N = N	dys + N = N	dysphagia
10. Pref + N = N	epi + N = N	epigastrium
11. Pref + N = N	ex + N = N	ex-champion
12. Pref + N = N	fore + N = N	forefather
13. Pref + N = N	hemi + N = N	hemisphere
14. Pref + N = N	hyper + N = N	hypercriticism
15. Pref + N = N	hypo + N = N	hypochondria
16. Pref + N = N	inl + N = N	inmixture
17. Pref + N = N	mis + N = N	mistrust
18. Pref + N = N	non + N = N	non-ability
19. Pref + N = N	out + N = N	outfield
20. Pref + N = N	over + N = N	overman
21. Pref + N = N	post + N = N	postposition
22. Pref + N = N	pre + N = N	pre-election
23. Pref + N = N	pro + N = N	pro-rector
24. Pref + N = N	sub + N = N	subsoil
25. Pref + N = N	super + N = N	superstratum
26. Pref + N = N	sur + N = N	surcharge
27. Pref + N = N	unl + N = N	un-person
28. Pref + N = N	under + N = N	underdog

**Հատկանշային ազդանշաններ:** Ածականական ինքնակերտ նշանասերում: Նախածանցներով ածականական ինքնակերտ նշանասերման ցուցան-

շանները կամ ազդանշաններն են՝ *a-1, anti-, circum-, cis-, co-, demi-, dis-, dys-, epi-, ex-, hyper-, hypo-, in2-, inter-, non-, over-, pan-, post-, pre-, pro-, sub-, super-, trans-, un1-, under-*: Սրանք առկայացուցիչներն են հոգեկան շերտի, որոնց միջնորդությամբ Pref + A = A լեզվական կաղապարը խոսքում ունենում է իր առարկայական վերաբերությունը: Նախաձանցներով ամականական ինքնակերտ նշանատերման բնույթը պարզորոշ արտացոլված է 3-րդ աղյուսակում:

Աղյուսակ 3

***Pref + A = A լեզվական կաղապարը և նրա հոգեբանական անցումներն ու խոսքային իրացումները***

Համակարգային (լեզվական) լիակաղապար: Նշանակյալ	Շարակարգային (լեզվախոսքային) մասնակաղապարում: Նշանակում	Գծակարգային (խոսքային) իրացում: Նշանակիչ
1. Pref + A = A	Pref + a1 = A	amoral
2. Pref + A = A	Pref + anti = A	antigrammatical
3. Pref + A = A	Pref + circum = A	circum-lunar
4. Pref + A = A	Pref + cis = A	cisatlantic
5. Pref + A = A	Pref + co = A	co-extensive
6. Pref + A = A	Pref + demi = A	demiofficial
7. Pref + A = A	Pref + dis = A	discontinuous
8. Pref + A = A	Pref + dys = A	dyscrystalline
9. Pref + A = A	Pref + epi = A	epiclinal
10. Pref + A = A	Pref + ex = A	excentral
11. Pref + A = A	Pref + hyper = A	hyperacoustic
12. Pref + A = A	Pref + hypo = A	hypodermic
13. Pref + A = A	Pref + in2 = A	incarable
14. Pref + A = A	Pref + inter = A	intercontinental
15. Pref + A = A	Pref + non = A	non-human
16. Pref + A = A	Pref + over = A	over-delicate
17. Pref + A = A	Pref + pan = A	pan-American
18. Pref + A = A	Pref + post = A	postpalatal
19. Pref + A = A	Pref + pre = A	pre-human
20. Pref + A = A	Pref + pro = A	profascist
21. Pref + A = A	Pref + sub = A	subterraneous
22. Pref + A = A	Pref + super = A	superfine
23. Pref + A = A	Pref + trans = A	transalpine
24. Pref + A = A	Pref + un1 = A	uncommon
25. Pref + A = A	Pref + under = A	underclad

**Ընթացային ազդանշաններ: Բայական ինքնակերտ նշանասերում:** Բայական ինքնակերտ նշանասերումը՝ նախածանց-ազդանշաններով, լեզվախոսքային հակադրությունների համակարգում Pref + V = V լեզվական համընդհանուր կաղապարի փոխանցումն է տվյալ ածանցով իրացվելիք հոգեկան շերտին և վերջինիս՝ բայական հիմքով համակցմամբ խոսքային համապատասխան դրսևորումը: Բայակերտ առկայացուցիչներ են հետևյալ նախածանցները՝ *a2-, be-, circum-, co-, contra-, counter-, de-, dis-, en-, fore-, in1-, inter-, mis-, out-, over-, pre-, re-, sub-, super-, sur-, trans-, un2-, under-*: Նշանասերման այս տեսակն արտացոլված է 4-րդ աղյուսակում:

Աղյուսակ 4

***Pref + V = V լեզվական կաղապարը և նրա հոգեբանական անցումներն ու խոսքային իրացումները***

Համակարգային (լեզվական) լիակաղապար: Նշանակյալ	Շարակարգային (լեզվախոսքային) մասնակաղապարում: Նշանակում	Գծակարգային (խոսքային) իրացում: Նշանակիչ
1. Pref + V = V	Pref + a2 = V	arise
2. Pref + V = V	Pref + be = V	beset
3. Pref + V = V	Pref + circum = V	circumnavigate
4. Pref + V = V	Pref + co = V	co-unite
5. Pref + V = V	Pref + contra = V	comtravene
6. Pref + V = V	Pref + counter = V	counteract
7. Pref + V = V	Pref + de = V	declutch
8. Pref + V = V	Pref + dis = V	disjoin
9. Pref + V = V	Pref + en = V	enclose
10. Pref + V = V	Pref + fore = V	foresee
11. Pref + V = V	Pref + in1 = V	incorporate
12. Pref + V = V	Pref + inter = V	interblend
13. Pref + V = V	Pref + mis = V	misinform
14. Pref + V = V	Pref + out = V	outpour
15. Pref + V = V	Pref + over = V	overleap
16. Pref + V = V	Pref + pre = V	pre-establish
17. Pref + V = V	Pref + re = V	redo
18. Pref + V = V	Pref + sub = V	sublet
19. Pref + V = V	Pref + super = V	superimpose
20. Pref + V = V	Pref + sur = V	surmount
21. Pref + V = V	Pref + trans = V	transplant
22. Pref + V = V	Pref + un2 = V	unarm
23. Pref + V = V	Pref + under = V	underline

## **Եզրակացություն**

Այսպիսով՝ ժամանակակից անգլերենի ածանցական նշանային բաղադրությունների բացահայտման ուղիներից մեկը լեզվական նշանների կարգային իմաստների՝ ըստ հնարավորին սպառիչ բնութագրության հասնելն էր, որը փորձեցինք իրականացնել վերացարկված հասկացական դասերի (առարկայնություն, հատկանշայնություն, մակադրահատկանշայնություն և ընթացայնություն) և կարգային ազդանշանների առանձնացմամբ ու հարաբերակցությամբ՝ դրանք տեղայնացնելով հայ լեզվաբանության մեջ բացահայտված լեզվական գոյամակարդակներում: Պարզեցինք, որ թե՛ վերջածանցային, թե՛ նախածանցային ինքնակերտ նշանասերման կարողությամբ առաջին տեղում գոյականներն են: Ածականները և բայերն առավել գործուն են նախածանցային նշանասերման մեջ: Նախածանցով մակբայական ինքնակերտ նշանասերում գոյություն չունի, իսկ վերջածանցմամբ ընդամենը երկու կադապար կա: Վերջածանցմամբ բայական միայն մեկ նշանասերման կադապար գոյություն ունի: Ահա հիշյալ կադապարների թվային տվյալները.

### **1. Վերջածանցային ազդանշաններով ինքնակերտ նշանասերում.**

Գոյականական նշանասերում – 51 մասնակադապար:

Ածականական նշանասերում – 7 մասնակադապար:

Բայական նշանասերում – 1 մասնակադապար:

Մակբայական նշանասերում – 2 մասնակադապար:

### **2. Նախածանցային ազդանշաններով ինքնակերտ նշանասերում.**

Գոյականական նշանասերում – 28 մասնակադապար:

Ածականական նշանասերում – 25 մասնակադապար:

Բայական նշանասերում – 23 մասնակադապար:

Մակբայական նշանասերում – 0 մասնակադապար:

## **ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

1. *Autogen* և *allogen* տերմինների հայերեն «ինքնակերտ» և «այլակերտ» համարժեքները տվել է Է. Աղայանը: Տես *Է. Աղայան, Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը*, Երևան, ՀՍՍՀ ԳԱ, 1967, էջ 380-381:
2. Անգլերենի նշանասերման առանձնահատկություններն առաջին անգամ փորձում ենք վեր հանել հայ լեզվաբանության մեջ մշակված մեթոդաբանությամբ, մասնավորապես Էդուարդ Աթայանի լեզվական գոյամակարդակների հայեցակարգով. տե՛ս *Է. Աթայան, Լեզուների ձևաբանական տիպաբանության առարկան և «անհատական լեզվական ձևի» բացահայտման խնդիր* // *ԲԵՀ*, 1988, հմ. 2, էջք 37-45: Նշված հոդվածում Է. Աթայանը «շարակարգ» տերմինը գործածում է լեզվաբանության մեջ տարածված ըմբռնումից տարբեր կերպ, այսինքն՝ դրանով ցույց է տալիս ոչ թե խոսքի գծային բնույթը, այլ լեզվական համակարգից խոսքին անցնե-



լու հոգեբանական պահը (հոգեկան շերտը), իսկ խոսքի համար գործածում է «զծակարգ» տերմինը:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աթայան, Է. (1988) *Լեզուների ձևաբանական տիպաբանության առարկան և «անհատական լեզվական ձևի» բացահայտման խնդիրը*. // ԲԵՀ, հ. 2, էջ 37-45:
2. Աղայան, Է. (1967) *Ճամանակակից հայերենի հորվումը և խոնարհումը*. Երևան: ՀՍՍՀ ԳԱ:
3. Мешков, О. (1976) *Словообразование современного английского языка*. М.: Наука.

## ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ՀՍՍՀ ԳԱ – Հայկական սովետական սոցիալիստական հանրապետության Գիտությունների ակադեմիա  
ԲԵՀ – «Բանբեր Երևանի համալսարանի» (գիտական հանդես):

### **The Autogeneous Semiosis of Derivative Compositions in Modern English**

By autogeneous semiosis of derivative compositions we mean a derivative (muliti-morphemic) composition wherein the generative basis of the composition belongs to the same part of speech as the derivative composition taken as one. We have studied the relationship between conceptual classes and signals and have localized them in various ontological layers of the language as revealed in Armenian linguistics.

### **Автогенный семиозис деривации современного английского языка**

Под автогенным семиозисом деривации мы подразумеваем такую структуру, при которой мотивирующая основа данной части речи является той же частью речи. Нами выявлено соотношение между сигналами и понятийными категориями, которые были локализованы к обнаруженным лингвистическим онтическим уровням армянского языкознания.